

ԿԱՐԾԻՔ

Մենք Սուրենի Քումունցի՝ «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» դոկտորական ատենախոսության վերաբերյալ

Նախ ներկայացնենք ատենախոսության արտաքին կողմը՝ կառուցվածքը. այն բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության, համառոտագրությունների եւ պայմանական նշանների ցանկերից: Հակիրճ յուրաքանչյուրի մասին նշենք հետեւյալը.

Ներածությունը (4-43 էջեր) բովանդակում է ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, մեթոդաբանությունը, գիտական նորույթը, տեսական եւ գործնական նշանակությունը, փորձաքննությունը եւ կառուցվածքը:

Առաջին գլուխը (44-284 էջեր) ներառում է Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում պահպանված նախահայերենի (հնդեվրոպական) շերտի բառերի քննությունը: Այստեղ ներկայացվում են նաեւ բարբառային նյութի համեմատական-թեմատիկ տախտակները, վիճակագրական աղյուսակները, կատարվում են նաեւ բառաքննական-ստուգաբանական վերլուծություններ:

Երկրորդ գլուխն (285-353 էջեր) ընդգրկում է հին հայերենի բառաշերտերի, այդ թվում՝ փոխառությունների վերլուծությունը՝ ըստ դրանց ծագման աղբյուրի: Ծավալված են բառաքննություններն ու ստուգաբանությունները:

Եզրակացությունները (354-363 էջեր), ինչպես նկատելի է, ծավալուն են եւ նույնքան էլ՝ բովանդակալից. հընթացս կատարված քննարկումներն ու վերլուծությունները վարպետորեն ամփոփ տեսքի են բերված եւ հաստատվում են որպես գիտական հետազոտության արգասիքներ: Այստեղ իր կատարման տեսքով ու բովանդակությամբ փայլատակում է Աղյուսակ 24-ը (358-359), որն ամփոփում է թեմատիկ խմբերում (23-ն են)՝ Կ. Բաքի, Գ. Ջահուկյանի եւ ատենախոսի քննության արդյունքները:

Ատենախոսությանը կցված են ինչպես նաեւ՝ օգտագործված գրականության, համառոտագրությունների, պայմանական նշանների ցանկերը:

Այսպիսով՝ ատենախոսության ընդհանուր ծավալը՝ համակարգչային շարվածքով՝ 397 էջ է: «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» ատենախոսության սեղմագիրը (Երեւան 2025), բաղկացած է 38 էջից:

Ծանոթանալով ատենախոսության սեղմագրին, ապա թերթելով ատենախոսության կատարումները՝ ինքս ներքին բավականություն զգացի, քանի որ ամեն ինչ արարված է մաքրությամբ ու պատասխանատվությամբ, եւ խորհեցի՝ լավատես լինելուց զատ, թափանցել ատենախոսի աշխատանքային ոճի եւ ստացված արդյունքների խորքերը:

Ինձ զբաղեցնում էր այն խնդիրը, թե ատենախոսը ինչ եղանակով կարողացավ ատենախոսության երկու գլուխներում քննել Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում նախահայերենի շերտի բառերը, հին հայերենի շրջանի բառաշերտը՝ շուրջ երկու տասնյակ թեմատիկ խմբերով:

Սեղմագրում կարդացի հետեւյալը. «Հետազոտությունը հիմնված է Կ. Բաքի եւ Գ. Ջահուկյանի կողմից մշակված թեմատիկ դասակարգման

սկզբունքի համատեքստում» (9): Ատենախոսության Գլուխ 1-ում. «Այստեղ փորձել ենք հետեւել մասնավորապես Կ. Բաքի, ապա Գ. Ջահուկյանի կողմից կազմված հնդեվրոպական ծագմամբ բառերի ցանկին... Հնդեվրոպական ծագման բառերի համար կազմված թեմատիկ խմբերի ցուցակները, որ տրված են 2-րդ գլխում, ներկայացնում են մեր շարադրանքի արդյունքը...» (44):

Մտքովս անցավ՝ նայել Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն», Նախագրային ժամանակաշրջան» (1987) գիրքը : Պարզվում է, որ Ջահուկյանը օգտվել է Կ. Բաքի գրքից, որի մասին գրում է. «Կ. Դ. Բաքի «Հնդեվրոպական լեզուների ընտիր հոմանիշների բառարանը» (Buck, 1949)... Հնարավորություն է տալիս գծելու հնդեվրոպական բառապաշարի սահմանները: Այն պարունակում է 22 իմաստային խումբ՝ համապատասխան ներքին բաժանումներով, եւ մեկուկես հազարից ավելի հասկացություն: Ընդգրկված իմաստային խմբերը հետեւյալներն են.

1. Ֆիզիկական աշխարհ
2. Մարդկություն՝ սեռ, հասակ, ընտանիք, հարաբերություն
3. Կենդանիներ
4. Մարմնի մասեր, մարմնական գործառություններ եւ պայմաններ
5. Ուտելիք եւ խմելիք, խոհարարություն եւ ամանեղեն
6. Հագուստ, անձնական զարդարանք եւ ինամք
7. Բնակարան, տուն, կահույք
8. Երկրագործություն, բուսականություն
9. Ջանազան ֆիզիկական գործողություններ եւ սրանց հետ կապված հատուկ արվեստներ ու արհեստներ՝ գործիքներով, նյութերով ու արտադրանքներով հանդերձ, զանազան այլ հասկացություններ

- 10.Շարժում, տեղափոխություն, փոխադրություն, նավագնացություն
- 11.Ունեցվածք, սեփականություն եւ առեստուր
- 12.Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձեւ, չափ
- 13.Քանակ եւ թիվ
- 14.Ժամանակ
- 15.Զգայական ընկալում
- 16.Զգացմունք (զգացմունքների ֆիզիկական որոշ դրսեւորումներով),
խառնվածքային, բարոյական եւ գեղագիտական հասկացություններ
- 17.Բանականություն, միտք
- 18.Զայնարձակում, խոսք, գրում եւ ընթերցում
- 19.Տարածքային, հասարակական եւ քաղաքական բաժանումներ,
հասարակական հարաբերություններ
- 20.Ռազմական գործ
- 21.Օրենք
- 22.Կրոն եւ նախապաշարմունք» (50):

Գ. Զահուկյանն ավելացրել է մի իմաստային խումբ եւս՝ 23-րդը. «Դերանվանական եւ սպասարկու բառեր ու մասնիկներ» (222). «Բաքի բառարանում տեղ չգտած դերանվանական եւ սպասարկու բառերն ու մասնիկները բերվում են մեր կողմից առանձնացված լրացուցիչ (23-րդ թեմատիկ) խմբի մեջ» (206), «Կ. Դ. Բաքի հնդեվրոպական համանիշների բառարանում հայերենին գրեթե տեղ չի տրվել» (204):

Զահուկյանը, ըստ Բաքի տարբերած բառիմաստային թեմատիկ խմբերի, ներկայացնում է ընդհանուր հնդեվրոպական եւ եվրոպական լեզուների մեծ

մասում տարածված արմատներ՝ անգլերենի դիմաց նշելով նաև հայերեն տարբերակները, օրինակ՝ *sūep- - «քնել» (*sūep-no - «քուն») եւ այլն (51-52):

Այնուհետեւ Գ. Ջահուկյանը մեծ հոգատարությամբ եւ գիտական խորությամբ նույն 23 իմաստային թեմատիկ խմբերով վերլուծություններ է կատարում վաղնջական հայերենի ընձեռած փաստերով (204-222):

Այդ նույն թեմատիկ խմբերին անդրադառնում է՝ բնութագրելով վաղնջահայերենի բառապաշարի հիմնաշերտը (257-274)՝ մինչեւ «Բարբառային տարբերակները» (274-279):

Մասնագիտական խորհրդի անդամներ, խնդրում եմ Ձեզ, Գ. Ջահուկյանի գրքին դիմելիս եւ վերն ասածները թեմայից շեղում չհամարեք, ընդհակառակն, այդ եղանակով համոզվեցինք, որ ատենախոսության երկու գլուխներում բառիմաստների 23 թեմատիկ խմբերի վերլուծությունները ատենախոս Մհեր Քումունցը կատարել է գիտակցաբար, քանի որ քաջատեղյակ էր Կ. Բաքի եւ Գ. Ջահուկյանի հետազոտություններին. նա, վստահորեն շարունակելով այդ մեծերի քննաեղանակն ու տարերքը, եւ վերլուծություններին զուգընթաց աղյուսակներ է կազմել՝ Բաքի, Ջահուկյանի եւ իր վաստակյալներով ու քննարկումներով: 23 թեմատիկ խմբերն ունեն 23 աղյուսակ, իսկ Եզրակացություններն էլ ունեն 24-րդ աղյուսակը, դրանց էջերն են՝ 64-66, 74-76, 88-91, 104-109, 115-118, 124-126, 131-132, 144-152, 159-163, 178-181, 183-185, 202-205, 206-208, 212-215, 224-226, 249-252, 255-256, 261-263, 266-267, 268-269, 269-270, 280-281, 283-284, 358-359:

Ատենախոսության շարադրանքի մաքրությունը, ընդգծումները, վրիպակներից զերծ լինելը, աղյուսակների ճոխությունն ու ըմբռնելիությունը հիացմունք են պատճառում, իսկ ծավալուն Եզրակացությունները,

Օգտագործված գրականության բաղադրամասերը՝ 1. Աղբյուրներ, 2. Գիտական գրականություն, 3. Տեղեկատու գրականություն եւ 4. Համառոտագրությունները մեծ բավականություն, զարմանք, միաժամանակ գիտական բարձր գնահատության զգացմունք են առաջացնում. դրանք զբաղեցնում են 33 էջ:

Հաշվարկ եւ կատարել. մեծ թվերով են՝

1. Գիտական հոդվածներ եւ ժողովածուներ- 163
2. Բառարաններ- 119
3. Մենագրություններ եւ ժողովածուներ- 107
4. Բարբառներ, խոսվածքներ եւ տեղանուններ- 61
5. Մատենագրական աղբյուրներ- 22
6. Գեղարվեստական գրականություն- 19
7. Լեզուներ- 73:

Բոլոր միավորները՝ օրինակները, միասին՝ 622, որից հայերեն՝ 513, օտար լեզուներով՝ 108:

Օտար լեզուներով՝ ռուսերեն-36, անգլերեն-37, գերմաներեն-7, ֆրանսերեն-3, թուրքերեն-12, ադրբեջաներեն-10, իսպաներեն-1, լեհերեն-1, լատիներեն-1:

Այսպիսով՝ գործ ունեցանք փայլուն բնույթի բազմալեզու գիտական հետազոտությունների մի բովանդակալից ամբողջության հետ, որին ծանոթանալով, դրանք կարդալով՝ ատենախոս-հեղինակը, բնականաբար, պետք է զինվեր գիտական, առավել եւս՝ մասնագիտական պաշարով: Այդպես էլ եղավ. դա բացահայտ նկատելի դարձավ ատենախոսության գրքում

իրականացված բոլոր տեսակի քննարկումներից, բնութագրումներից ու ցուցադրումներից:

Ատենախոս Քումունցի վերլուծությունները հստակ են եւ գիտական, ըմբռնելի, հասկանալի եւ նույնիսկ հաճելի. խոսքը պարզ է ու համոզիչ, նպատակաւաց է եւ զերծ ավելորդաբանություններից:

Այս ամենի հիմքում ընկած է ատենախոսության նպատակը:

Նախ՝ ատենախոսությունը նվիրված է Սյունիք-Արցախի բարբառային տարածքի բառապաշարի պատմական շերտերի ուսումնասիրությանը, ապա նպատակը՝ իրականացնել Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի պատմական շերտերի համապարփակ եւ համակարգային վերլուծություն թեմատիկ խմբերում՝ պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ բացահայտելով նախահայերենյան, հին հայերենի եւ փոխառյալ բառաշերտերի ձեւախմաստային դրսեւորման օրինաչափությունները (ընդգծ. է. Մ., Սեղմ., 4): Նպատակն իրագործում է փաստական նյութի հետազոտությամբ, որն իրացվում է որոշակի մեթոդներով՝ պատմահամեմատական, նկարագրական, համադրական-զուգադրական եւ բառաքննական-ստուգաբանական:

Ատենախոս Մհեր Քումունցը գրքի ծավալուն Ներածականում բազում անդրադարձումներով, հեղինակային վկայություններով խելացի նախապատրաստական աշխատանքներ է կատարում, ինչպես՝ 1. Պատմական բարբառագիտությունը եւ Սյունիք-Արցախի բարբառների ուսումնասիրության հարցերը, 2. Գրականության ակնարկ, 3. Ատենախոսության վերնագիրը, 4. Սույն աշխատանքի արդիականությունը, 5. Ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունքները եւ Սյունիք-Արցախի

բառապաշարի նշանակությունը, 6. Աշխատանքի նպատակը, 7. Հետազոտության օբյեկտը եւ առարկան, 8. Հետազոտության հիմք են ծառայել Հ. Աճառյանի, Յ. Պոկոռնու, Գ. Ջահուկյանի, Կ. Բաքի. Է. Աղայանի. Ա. Մարգարյանի, արդի շրջանում՝ Ն. Սիմոնյանի, Լ. Հովհաննիսյանի, Վ. Համբարձումյանի, Վ. Կատվալյանի եւ նշանավոր այլ լեզվաբանների աշխատությունները՝ նվիրված հայոց լեզվի պատմությանը, ստուգաբանությանը եւ բարբառագիտությանը, 9. Աշխատանքի գիտական նորույթը (էջ 32), 10. Աշխատանքի տեսական եւ գործնական նշանակությունը, 11. Աշխատանքի փորձարկումը, 12. Աշխատանքի կառուցվածքը, 13. Հիմնական հասկացությունների եւ տերմինների սահմանումը, 13.1. Բարբառախումբ || բարբառային խումբ, 13.2. Սյունիք-Արցախի բարբառներ (նույն նշանակությամբ՝ Սյունիքի եւ Արցախի բարբառների խումբ, Սյունիք-Արցախի բարբառային տարածք), 13.3. Գորիսի բարբառ, 13.4. Բարբառային բառապաշար, 13.5. Ընդհանուր հայերենյան բառապաշար:

Ատենախոսության Առաջին գլուխն ամբողջությամբ նվիրված է Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում նախահայերենի շերտի բառերի քննությանը. Այդ բարբառային տարածքի բառապաշարի հիմնական շերտը կազմում են նախահայերենից ավանդված բառերը, որոնք ուշագրավ են ծագումնաբանական, բառիմաստային, իմաստափոխության եւ բառակազմության տեսանկյունից:

Ատենախոսը նշում է, որ այստեղ փորձել է հետեւել մանավանդ Կ. Բաքի, ապա Գ. Ջահուկյանի կողմից կազմված հնդեվրոպական ծագմամբ բառերի ցանկին՝ արդեն իսկ արձանագրված տվյալները բաղդատել Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում առկա ձեւերի հետ (44): Նախահայերենից եկող

շերտի բառերը ընդգրկվում են Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառիմաստային՝ թեմատիկ բոլոր խմբերում. 23 թեմատիկ խմբերից յուրաքանչյուրն ունի առնվազն մի քանի տասնյակ բառամիավորի քննություն, բնութագրություն: Անհնար է այստեղ վկայել բոլորը, բայց կարդալ անհրաժեշտ է: Պետք է զգալ, որ բարբառային տարածքը երբեք մեկուսի չի եղել ընդհանուր հայկական՝ գրական եւ խոսակցական միջավայրից:

Որոշ վկայություններ անենք:

1. «Ֆիզիկական աշխարհ» թեմատիկ խումբ

Օրինակ՝ յերգիր «երկիր», վեղ || վըեղ || «հող», կյօ՞ք «գոգ», տիլ || լըեկ || լե, լեպ, լըեպ «ցեխ եւ տիղմ», կըլօլակ «գունդ», լըեկ «պղտոր», փըրփօր «փրփուր», կետ || կյըետ «գետ», լափու «ալիք, հորձանք», վարար, վըրըխկալ «հորդությամբ հոսել», օրկուն «հորդ, վարար», փեդ || փադ || փա՞դ (փայտ), ցըլեփ || ցըլըեփ «փայտի կտոր», լըքըրչան || լըկըրչան || լըքըչան || լըքըռչան «սայթաքուն վայր», կաշկառ || քյալաք «քարերի խումբ», արեվ || ա՞րեվ, լուսին || լու՞սնա՞նգյա՞, կեծակ || կեծծակ, ըրօտ || ըրտօց, լուս «լույս», շօխկը «շող, ստվեր», մըրըխկեկ «մթնել», ծու՞ն «ձյուն», ամբրօք || թօխպ «ամպ», կած || կեծ «կայծ», անձօղնը «ածուխ», երիլ || իրա՞լ «այրել», խանձել || խա՞նձիլ, պօղ «վառված փայտի կարմիր վիճակը», լայ «գերանդիով հնձած խոտի շերտ»:

Սրանց հաջորդում են բառաքննությունը եւ ստուգաբանությունը

Թեմատիկ խմբին առնչվում է Արցախում գործածական սու՞նգյու՞ || փու՞սնու՞նգյու՞ || փըսընգյու՞ || փա՞նգյու՞ (Սյունիքում՝ սօնգուփըսօկ, Խձաբերդում՝ փու՞րսու՞նգյու՞) «ձյունախառն ուժեղ քամի, փոթորիկ» բառը:

Բնութագրվում են ուռուն «բուք ու բորան, վատ եղանակ» թա՞թա՞ռ «պտտահողմ», թօռ «անձրեւ», լափու «ալիք, հորձանք», լափու (տալ) «ալիք,

հորձանք», սրկըհէլ-ծըկէլ, սըլընգէ-ծըլընգի, զըկըռտալ, զըգըխտալ, զըխտալ, զըխտըկվէլ, զըկէռ || զըկըռնը, զըկըռթըթօ, զըկըռհատ, զըկըրտօց, կըռօճ (գոհճ) «հողակտոր, գուղճ», զըկըռհատ կյա՛լ «զկռտալ», փըթօթ կյա՛լ «իրար ագուցվէլ», օրկունանէլ || տալ «սէլավ», ծյուկուն || ծուկուն, ծօկուն, դօ՛գյու՛ն: Սրան հետեւում է Աղյուսակ 1-ը /64-67/:

Թեմատիկ խմբերի մյուս 22 խմբերի յուրաքանչյուրից ընտրում են 14-15 օրինակ՝ շարադրանքիս ծավալը չուռճացնելու նպատակով:

2. «Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ»
թեմատիկ խումբ

մէր || մըէր մարթը, մէր || մըէր կընէգը || կընէգյը, դօրփէր «հորեղբայր», հըրսանիք || հըրսանէք, հէր || հար || հա՛ր, վէրթի || վըէրթի, քէր || քուր || քյու՛ր, սօնքսըզ «չբեր», ծունկ-ծօնգնը || ծօ՛յնը, թօռնը, կօռնը, կառնը, թօփ || թուփ անէլ, թու/օփալանալ «կաղ դառնալ», թու/օփըլանալ «չաղանալ»: Աղյուսակ 2 /74-76/:

3. «Կենդանիներ» թեմատիկ խումբ

վէրց || վըէրց, հօտ(աղ), ըրածէլ, տըվարած, կյում || կու՛մ, ցուլ (քյա՛լա՛), կօվ || կավ, վըէրթ (հօրթ), ամլիկ || ա՛մլիգ/կ, վըէրցակ || վէռցակ, շօն, ծա՛ք/ծա՛քյ, քօնթ, մօզի (դանա), մօկուն, կօ՛րտնուկ || կյօռնուկ, կաքէվ || կաքավ, հօպօպ, սարյակ, ծուկուն || ծու՛կու՛ն, կու՛լ || կյու՛լ, վէրս || վըէրս, թա՛լա՛կ, մըրչէմնը || բու՛չու՛մնը, վէչիլ || վու՛չու՛լ, տըէզ || տըզ, մըղրաճա՛նջ, պըղօ(ր)ճ, օխց, լօկ, կօզնի, գիդի (զըղըզիդի), մըկլըմա՛նդիլ, քեռ-քըռավ կյա՛լ «բեղմնավորվէլ»:

Ստուգաբանվում են՝ պըղօճ, լօկ, տուլաշ, քաղ, անգ, բծիծ, պիծակ>պըտէզնը: Աղյուսակ 3 /88-91/:

4. «Մարմնի մասեր, մարմնական գործողություններ ու պայմաններ»
թեմատիկ խումբ

Այս խմբում հնդեվրոպական ծագմամբ շուրջ 229 բառ վկայվում է հայերենում: Հիմնական անվանումներն են՝ մէս || մըէս, լա՞պըռ «թույլ կախված միս», ճիլ «ջիղ, մկան», կըռըզնօտ «գանգուր», միբուք, արին || արուն, վըէսկէռ || վըէսկըռ, կօխկ>կուխկաճաղ, հարու (տալ), պօջ, տըէտտ, վէռ || վըէռ, թէգյունք «թիկունք», կօռնը «թել, ուս», մէշկ || մաշկ, քամակ, սէռ || սըէռ, իլիկ || իլիգ «ող», հօռ (մըշկահօռ), հուլուվէր, կըլօխ, իրէս «երես», կընճըռնէ/ի, մըռու/օթ, ծընձօտ || չանա, թօղ, կըլլան «կոկորդ», աշկ, անջուկ || անջուկ || անգուճ, ա՞նգյ, պէրան, լաբ (լափառօշ), լուգու, աստամ || կըէռէնքյ, սըէպ || սէպ, լէմ, լինդ || լընդէր, տըմտէմուկ || տըմտըմօկ, կըլլան, խըրթիլօկ || խըրթըլօկ, ծըէռք || ծէռք || ծերք, վըէնդ || վէնդ || վըէննը, օս, թէվ, արմունգ, հափուռ, ծօնգնը, կըրօնգ || կըրօյնը (դաբան), յէղօ/ունգ || յըէղէնգյ, թէվ, պըտօկ, սըէրտ || սէրտ, լյարթ, թօք, փօր, արքանդ, փացախնը || փացէխ || փածըէղնը, կյափ «ոտքերի արանքը», ծու՞/ու, պուպուկ, պօց, շունչ || սունչ, հօքի, հազ || հազ, փըռըշտալ, քըրտօնք || քըռնօնք, թէք || թըէք || թուք, փըսլէնք/քյ, զըկըռտալ, կըծէլ || կըծիլ, լուգ տալ, լըպըզտէ/իլ, քօն, զարթուն, մէզ || կյուզ, ցէ/ըռ, թըրէք/քյ, կըտէտ:

Ստին-ք արմատը չկա, բայց կան՝ ծէծ || ծըէծ «ծիծ», կօրծ || կուրծ՝ հ.է. կըծէլ բառից:

Ապա մի քանի տասնյակ բառեր քննության եւ ստուգաբանության են ենթարկվում, որից հետո էլ 5 էջանոց Աղյուսակն է:

5. «Ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում եւ ամանեղեն» թեմատիկ
խումբ

Բառապաշարում պահպանվել են հետեւյալ հասկացությունները՝ օտեմ (կեր), լակել, ծամել, լրմլրմօրել «ծամծմել» բըտել || պութել, կօլ (տալ) «կուլ տալ», կըռծել, մօռտել, ուրօճալ (արօճ անիլ), կեր, կերակուր, փափա, լակ, լափ, սաղունձ, հարփիլ, նօթի, հու/օնցել, հում, իփել || իփիլ (<իփալ վաղակատար), խաշ (տալ), խըրօվել || խըրավել, աղանձ || դանձիտ, պուլիկ || պօլեգ, տիկ || կուպրուն, աման, քիթալ || քըթօլ, արկանք, կերակուր, հաց, կըլօլակ, պէխկ, կըլըմօգ, պըտօղ, կօրինձ || կօրեգ, կօտ, չիր, շըեվ || շեվ, մօշ, մըռ-ա-մօշ, մօրի || մօրե, սօնգնը || խըռվասունք, աղ, քացա/էխ, մեղըր || մըլեղըր, կաթնը, դալ || բըլամա, կինի՝ || կյինի, մըաջառ || մաճառ, մառ, ածեգ || ածեգ, հում || հօմ, մէս || մըլէս, ալեր || ալ՝ու՝ր, քյութ, սիսեռնը, սըխտօր, թրթնուտ «գաթայի տեսակ է», քյա՝թա՝...

Թեր «1. թերթ, 2. տերեւ, 3. ցողունի կեղեւ, 4. որեւէ իրի բարակ թերթը». թեր> թերի «կիսատ»՝ թերատ, թերխաշ, թերհավատ, թերհաս. թեր՝ «տերեւ՝ սխտորի, սոխի, ճակնդեղի եւ այլն» պը/էխկաթեր, տըկաթեր...

Այսպէս ստուգաբանվում են նաեւ փիթի եւ ածիկ բառերը:

Նախահայերենից ավանդված արմատներով են կազմված նաեւ շըփօթ, կըրկէնի, կաթնավ, հէլաթ, թուռնաճաշ, պուտ, մըսըրթթօ եւ այլ բառեր, արմատներ:

Այս ամենին հաջորդում է Աղյուսակ 5-ը (115-118):

6. «Հագուստ, անձնական զարդարանք եւ խնամք» թեմատիկ խումբ

Այս խմբի բառերն են՝ հաքնել (հըքցընել), կէնալ || կյընալ, ցիլ(ա՝նգ), հէնքիլ, ինգա՝ծ || ինգյա՝ծ, վէստան || վըէստան, պուրթ, մալանչ, կըտավ, թաղիք, քէչա (կէճ) || քյէչա, սերեկ || սիրեկ, սարել, իլիկ || իլիգ, կօրծել || կյօրծել,

հինել, շէվ, ասէղնը, թէլ || թիլ, կըղան, կըծէկ || կըծէգլ, քօղ, ակ, ծիլի, մըտանի || մուտանէ:

Բառաքնության եւ ստուգաբանության են ենթարկված անկանել (>անկուած) բայը (ինգլէ || ըղնէլ), քիցէլ || քըցէլ (յըրա քըցէլ), շիւ «ջուլիակի հաստոցի պատկանելիք», շէվ «նորատունկ, թարմ ոստ» (ճօղնը), սերէկ (կաշվի կտոր ամանների բերանը փակելու համար)՝ սէրէկէլ, սէրէկ || սիրէկ, սարք «որեւէ սարքավորում», կուղ>կըղ-ան «1. փափուկ կաշվից հաստ պարան, 2. գութանը, սայլը, արորը լուծին միացնելու մասը»՝ կակուղ || կակօղ, կըկղամըէս, կըկըղցընէլ, դերձակ>դարգի, թաղիք>քէչա || քյէչա, թուրքերեն՝ կաճ || կայճ «թաղիք, նուրբ»՝ կաճեայ || կաճեայն... կէճ || կյէճ «թաց, ճկուն...», սարիլ «սարքէլ, լարէլ, նետէլ, գցէլ, դուրս ցայտէլ, մանէլ, հեռու նետէլ, մէկնէլ, երկարէլ», ոստայն || վէստան «գորգագործի հաստոց, գործած թելերի ցանց»:

Հաջորդում է Աղյուսակ 6-ը (124-126):

7. «Բնակարան, տուն, կահկարասի» թեմատիկ խումբ

Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարն այս խմբից ունի հետեւյալ բառերը՝ տօն, պուն, կաղաղ, վօրէ, տոռնը || տօռնը, փէխկ, լամփա || լօփա, պիլանի, տարթ, պօվ, սարք, կօղէ/ինք, նըստէլ, սէղան, հէրթ || հուրթ:

Քննարկումներ՝ դօխկազ «ծանր ու մեծ փայտեղեն», թօռծ «գերանի եզրին բացված անցք», լօփա-լօփա (տըխտըկնի) «լայն, կարճ եւ հաստ», լօփա-լօփա (խօսալ) «մեծ մեծ խոսէլ», լատան «երկար ու բարակ գերան», սուն || սուրուն «հենարան, սյուն, գերան», լուծ || լուծ «ամուր փայտից սարքված հաստ ձող՝ անցքերով՝ եզները լծելու համար», սարասընգի || արասընգի «ճոճանակ», կաղաղ-ճըղուպեր, նաեւ ոչխարի դմակին կպած կեղտ, կըտէտ:

Էջ 131-132՝ Աղյուսակ 7:

8. «Երկրագործություն, բուսականություն» թեմատիկ խումբ

Այս թեմատիկ խմբի բառերը շատ են. դա տեղաբնիկների մեծ հետաքրքրությունն է: Բոլոր բառերն են՝ արտ, հանդ, խեչակ, կօրի || կօրե, արօր || ալաթ, հերկել, ցիլել, փօրել, թե || թի, պիհըր, յե/ըեղան || յըդօլի, ցաքյան, սե/ըերմել, քաղել, քըլպել, տըռօզ, կերանդու || դա՞րյա՞զ, յըդօլի, կամնը, աշան || հաշան, մըղե/ըեղ, պերք, պըսօղ, ծու՞ծու՞ն || ծուծուն, ծա՞վա՞ր, հ/աճար, կօտ, հատեգյ, կօրինձ, կօրեկ, կօ/ուրկօտ/ուտ, կա՞րի || կյա՞րի, կեճ || կյեճ, տալար, թառամ, թօռմ, հալօճ/ջ, զըկեռ, պեքի || պեքյի, պօլի, գայլուկ, կինձ, տաղծ, թալ, թելուկ, մամուռնը, մըտիտե/ըեղնը, վուլուկ, վեսի || վըեսե (քօլ), ցա՞քյ || ցա՞քի, քեղ, տակոե, պըդպօջ>պըխպըխօտել, ծիլ, պօխ, ծօղ, մօլ-օղ-ա-վարթ, տա/ալ, շել, պոտ>պտկվել, ծղան, ցաք, թեր, թերթ, ծաղեզ/գյ, ծառ, պըլկան, պըռկել, պըռօկ (տինիլ), ջալաղ, առնել, կաղնի, մայրի, կենի || կյըենե, յեղեվնի, հացի/ե, թելի || թեղե, ցախ || ճա/եխ, պուքի, կաղի/են, տըկօղին || Հաղ. , Խծբ.՝ թակօղնը, ճիթ, թանազ «խաղողի որթ, վազ», քընեռնը «քնթել» հ. ե. (ծ) *Ken-, -d- «ճեղքել-հանել, կաշի, կեղեւ»:

Բառաքնությունը եւ ստուգաբանությունը նույնպես ծավալուն են ու հետաքրքիր:

Վկայենք միայն մի քանի օրինակ՝ ծանծ «կճեպ, հարդ», ծուծուն անել «ցողունը ծեծելով այրել», խաշեմնը, յեշնել «բորբոսանել», ջալաղ «պատվաստ»՝ ջըլղել, ջըլաղել, դօգյուն «կոստղ, խուլ», քըլպել, ծըրըկուտուր անել, բուկլից անել, ծըղկասերմ, թրթնջուկ, ճղել/ծղել, ծղանել, ծավար>ծիվարել, կօրկօտ || կուրկուտ, (հ)աճար «ցորենի մի տեսակ», ածիկ «կանաչեցրած ցորենից ուտելիք»:

Հաջորդում է Աղյուսակ 8-ը (149-152):

9. «Ֆիզիկական տարբեր գործողություններ եւ սրանց հարաբերությունը առանձին արվեստների ու արհեստների հետ՝ համապատասխան գործիքներով, նյութերով ու արտադրանքներով. այլ հասկացություններ»
թեմատիկ խումբ

Թեմատիկ բառերն են՝ կեռ>կռորցընել, ճըմալ, զօ/օթել, տի, առնել, կօրծել, կըռանալ, կապ, կեմ, ք/կըշկըռել, հարել, տըփտըփել, դմփըցընել, դընգըլցընել, թակել, կըռ(օ)ճել, լօսվել, քըռթել, ծըղանել, ցիլել, փեղկ-ա-հան, փըրթ-իկ, տըրաքել, ծըղօղ(ն)ել, ք/քյիրել, քերթել, քօրել, քերծել, պօկել, ճըմըռել, լըմ-լըմ-օրել, փըռել, ծիքել, հանել, ցըրել, ճընդել, քամել, լիցնել, աման, ցի/էթել, ցրնել, լիվա՞նալ, եվլիլ, է/իվիլ, ըրհեստավեր, կօրծի-ք, հըստատել, ըստեղծել, թօրծ-ել, թակ, օոնը, կ/կյէ/ըւերան, կօճ, ծօղ, սու՞ն || սու՞թու՞ն, նէտ, շաղախ, թէքել, սալ, հալել, պօվ, արծաթ, դուրգար || դուլգյար, իսկ-ի, էմ, կօյ-ուրթուն, ինել || ըղնել || ինիլ, տառնած, հարմար, փօրցել, յեղանակ, հըյթայթել: Որոշ բառաքնություններ եւ ստուգաբանություններ կան, հետո Աղյուսակ 9-ն է (159-163):

10. «Շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն»
թեմատիկ խումբ

Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարը հարուստ է այս խմբում ընդգրկված հնդեվրոպական առնչակցությամբ բառերով: Նվազ է նավագնացության վերաբերողը (նավ, լաստ, թե, թել): Ընդհանուր պատկերն է՝ տնտղել, տըռցընել, տառնալ || տէ/ըւեռնալ, զըվըռնել, հօլօլ, կըլըխկօնձի, հիլօ/օրել, գարգի (գյիրգ), մըխել, կըրել, պեռն(ել), ածել, պի/էրել, տանել, հղի/է, նիհ ինել, թամք, խըթխըթօրել, հըրմըշտել, քըռի տալ, (շըռ)ուրթկան || շըռօթկան,

հորթ, կա/էծան, սունդու, կարմինջ || կարմուջ, հուլուլ, լուծ || լուծ, սամէ || սըմբէտան:

Բազմաթիվ բառերի քննություն եւ ստուգաբանություն են կատարվում. ոլոր-հիլօ՞ր-հիլօր, հըլօ/օրչա/ան, հիլօ՞րվել>հօրօվել, հըլօվօր || հըլօվուր || հու՞լու՞վեր, իջնել-կըլխըվերել, քըշանալ, յեր (վեր) կ/կյալ (վեր ընցրնել, լինջըվերել, ըստօրել), տու/ըմբտու/ըմբալ «երերալ, օրորվել», տըմբ (-ալ), տըմբըհան ինել, թմրել-տըմբըրել, ալանգյա, անգյալ, լառ<ալար || ալարել, սըլկըհել, սօթ տալ, սըղալիլ «սահել», տու՞րու՞ր/ն կյա՞լ, դիրար || իրար տալ, տու՞րու՞ր տալ, ժա/աժ || ժէժ, թառժաժ անել || ինիլ, «թառած հավեր», կուփէ-կուփէ անել, լօք տալ, ծըլկել, լօք-լօք անել, կէտ, կէտել «փախչել», ժաժ են գալի ամպերը, ժաժիկ, ժէռ, կօչ կ/կյա՞լ, կըչառ անել, կըկու/օռ, կուճ/ի «փոքր», կըզկըվել (> կծիկ (կըծեգ տառնալ), կըլօլվել, տըզըրթեվել, հօփ կյալ, տապ(ռ) անել, կածան || կէծան, մըրթըկածան, ծըմըկկէծան, սըռնըկածան, կէծանհիլօր, ծւլվըծալ կածան:

Ծավալուն Աղյուսակ 10 (178-181):

11.«Ունեցվածք, սեփականություն եւ առեւտուր» թեմատիկ խումբ

Քիչ բառախումբ ունի՝ ունեմ || օնեմ || օնըմ, տեր, առնեմ, կալել (կա), փրոնի/ել, ստանալ, տալ, տիրցընել, յ/հէտ տալ, նօրըցնել, ճինջե/իլ, հըրըստօթուն, արծաթ, հարուստ, կըլըմբօզ, աղքադ, կյօ՞դ, կյու՞ղանալ, տընտըղել, ակը տալ, ծիրքըհարե/իլ, մըննըհարել, յե/ըէկամուտ, տուրք, օքուտ, առեվտուր, կին || կյին, քիթնել, աղը չօ/օր «հարուստ», իլլել (իլլած) «ունետր լինել», լիզինը «հարուստ, ունետր»:

Աղյուսակ 11 (183-185):

12.«Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձեւ, չափ» թեմատիկ խումբ

Այս թեմատիկ խումբը 20 էջ է զբաղեցնում, եւ 100-ից ավելի բառեր են վկայված, կարդալ է պետք: Ընտրությամբ նշենք՝ թըղ-աղ-ուսկ (անէլ), օնջ || ունջ, մէչ || մաչ, ծօռ, քյու՝նջու՝պու՝ճախ, սէռ/սըէռ, Քարահունջ, կէտ «շնաճանճ», զէհ «էգր», տուրուր կյա՝լ, քաշ «1. ցած, 2. արծվի տեսակ», քաշկ «առասպ. ոգի», քաշ (կառ) || կաշկառ «քարակույտ», Քշաթաղ, Քաշունիք, կ/կըէդ, քիփլիկ/գ, ծիպլի || ցիպ-լի, Ծիպլի Ծատօր, ծախ, մին պիծի, ճօ/օնդ, ճինդըպուչախ, ճօն, կըռճօնք, կըռօճ, կյու՝ն անէլ, սըլըխկիլ, սըլկըհէլ, պիխպըխօտէլ || բըխ-բըխ-օտ-էլ, տըռօզ, տըռօճան, կյու՝լի թըէս, տըռըճըժկան, թըսըվավա, տըռըզիլ, թըղըծօ/աշկէլ, օռէլ || օռալ, պիլիթիլ, պըղօճ, փիքփըքօտէլ, փըքվէլ/ալ:

Աղյուսակ 12 (202-205):

13. «Քանակ եւ թիվ» թեմատիկ խումբ

Քանի, թիվ, լօխ «ողջ», ամա/էն, պիլօր «բոլոր», հը-, առռէ, ավէ/իլ, հէրիք, լիզինը || լիքը, մասնը, ծըվա՝նգյ, մին, մինա՝կ, ըռաջ-, հէտին, էրկու, իրէք, յօր-օրթ, իրըք (տակ), չօրս, հէնգ, վէց, օխտը, օթ, ին/նը, տասը, տը/ասնըմին, տասնէրկու, տասնիրէք, տասնըչօրս, տասնըհի/էնգյ, տասնըվէց, քսան, ը/իրէտուն, քառասուն, հիցուն, վացուն, օ/ուխտանասուն, իննասուն, հարուր, մինակ || մէնակ:

Աղյուսակ 13 (206-208):

Ատենախոսը նույնպիսի պատասխանատվությամբ ներկայացնում է մնացյալ թեմատիկ խմբերի բարբառային գանձերը, որոնք հաստատում են ուսումնասիրվող ու քննարկվող նյութի անցյալի՝ պատմավաղնջական բարդ ու աներեւակայելի ճշմարտությունը:

Այժմ անհրաժեշտ չենք համարում այդ մյուս խմբերին վերաբերող շարադրանքի փաստերը ներկայացնել, հաճելի է դրանց ընթերցելը, իսկ այնքան էլ հաճելի չէ ընդդիմախոսությունը ծանրաբեռնել:

Թեմատիկ խմբերից ծավալուն է 16-րդը՝ 25 էջ, 15-րդը՝ 13 էջ, 22-րդը՝ 12 էջ, մյուսները՝ 8, 7, 4, 3, 2 էջեր են:

Երկրորդ գլուխ. Հին հայերենի շրջանի բառաշերտը Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշարում

Արդ դասագրքային եւ ակադեմիական ըմբռնմամբ բարբառային բառապաշարի շերտերը բաժանվում են փուլերի, հատկապես հին հայերեն եւ հայերենի հին շրջան եզրույթներով հասկանալ եւ ընդունել V-XI դարերը, ինչով մեր լեզուն հայտնի է գրաբարի շրջան անվանումով:

Բառերի եւ թեմատիկ խմբերի տվյալներով հեղինակը արձանագրում է Սյունիք-Արցախ տարածքի բարբառների՝ հին հայերենում գործածված շերտերը:

Գործիքների անուններ - Ագբ(ն) || ա՛սպ, ըսպաթել, ձօղ || ծօ՞ղ, կըցնահա/էտ տառնալ, դուր-տօ՞ր || տու՞ր, ուրագ/ք || հօրաք || հօրէքյ:

Նյութեր՝ ածուխ || անձուղ, արծաթէղէն, արկաթ || ըրքըթէղէն, վրէսկի:

Մասնագետ՝ բրուտ || պու/ը/ի/րուտ, պուրուտանօ/ուց, կաշեգործ, դաբաղչի, դամուրչի:

Բուսանուններ՝ անանուխ-նանուխ, նանա || նա՞նա, իվու՞լու՞կ, վու՞լու՞կ, ըվու՞լու՞կ, հիվու՞լու՞կ, ավել>ա/ավել, ավել/իվիլ, ցըխեվուլ, ճըխեվի/ուլ, դաղձն-տախձը, թըրթընջուկ, պէնջար, կօր/ոընգա, շրէշ, շ/ա/իրի/է/ջ/շ/ժ, սամի/էթ, սիբեղնը || սիվէղ, տ/կյըխտըկօռ, եզան լեզու,

գառնալեզու, իծի կօթ, կատվի մօրիս, կյուլի թէս, ծըտի պարց, առյուծագի || առյուծաքի:

Բուսանունների մյուս խումբը՝ պե/ա՝մբա՝կ, պէխկ, կյա՝/եզա՝ր, կյալաս || գլիլա՝ս, խիյար, խը/ունձօր, խըստօր || սըխտօր, հօյ/ու/օն || հուն, շի/ըլօ՝ր, սինձ-սէգնը, գիլըմասրի, գիլիմաստրի, գի:ըմըհասրի, գիլիմասրին Գարիսում՝ քրըմասրի, շընըմասրի, պըռավի պօրտ եւ այլն:

Ծաղիկներ՝ բ/պ/անգի, զանգակ, ձնծաղիկ, նարգէս-նա՝րգլիզ, շու/օշան, զանգյակ, սմբուլ-սու՝մբու՝լ, սուսամբար, ծաղիկ || ծաղէզ, մինէշա՝կ, վա/արթ:

Ընդեղեն՝ հաճար, բակլա || պակլա, բրինձ || պը/իբինձ, գարի || կյարի, կօրէկ, կըտըվիատ, վօ/էսպ, սիսէռնը, ցօրեն:

Անվանումներ՝ տարման || տէրմա՝ն, խէժ, խօր/ոթնը, խօզան, կընընգօթուն, հասկ, հատիկ, ճիւ || ճում, ճիպօտ || ճըպատ, ճօղ/նը, շիվ || շէվ, վօստ || վըէստ, պաճ-պըճէղէն, սըրմարանք, տակոռի/է, ցախ-ճախ || ճէխ:

Երկրագործություն՝ գութան || կյու՝թա՝ն, կամը, կէմ, երկանք || արկանք, բահ-պիհ, գերանդի-գյա՝րա՝նդու՝ (Հղր. Խծբ. դա՝րյա՝զ), մանգա/էղ, բիր-պիհը, դօխն-տօղ || տուղ, փօցիս-պա՝հա՝վ տալ, վար (անէլ) ցիլէլ, հօնձ, մաճկալ...:

Ազգակցություն նշող՝ ախճիկ || ախչիզ, կին-կընէկ || կընէզ, ըխպըրակի/էն, կընգօթուն, հուլիվէր || հիլիվէր, որբ եւ այրի՝ իրփըվէրի, երախայ-ըրախա || խօխա, հըռթնօթուն, տատ/ի, պարիկամ, հանէր, քէնի, խընամի/է, դօրփէր, մըրաքուր || մաքուր, հըրաքուր || հաքուր, զօքանչ:

Կան՝ կենդանական աշխարհին, ռազմական կյանքին, ֆիզիկական աշխարհ նշող, կրօնին վերաբերող, ուտելիքի եւ խմելիքի, հագուստ անձնական զարդարանք նշող, ֆիզիկական կյանքի հետ կապված, շենք-

շինություն նշանակող, մեծ թվով բայերի, մասամբ մյուս խոսքի մասերով հարյուրի հասնող եւ ավելի ու ավելի բառեր:

Ատենախոսը հին հայերենի շրջանում բարբառախմբի փոխառությունների ծագումնաբանական դասակարգում է կատարում: Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարին վերաբերող աշխատանքներում հնարավորության չափ տարբերակվում են մասնավորապես բարբառային փոխառյալ շերտերը, եւ ստուգաբանական ու բառաքնական փորձեր են արվում առանձին բառերի ծագման շուրջ: Բարբառախմբի՝ հին հայերենից անցած փոխառությունները հիմնականում գալիս են վաղնջահայերենից եւ կազմում եմ հնագույն հայերենի բառապաշարի միջուկը:

Խոռոերենից՝ խնձոր-խինձո՞ր, խաղող-հավօղ, նուռ-նօռնը:

Ուրարտական շերտից՝ պուրգ || բուրգ, օխտը «կենդանի», ծով, ծաժ, կանաչ, արքաթ, վէսկի «արոր», կոտեմնը եւ այլն:

Սեմական լեզուներից հայերենին անցած փոխառությունները, որոնց հիմնական մասը Սյունիք-Արցախ բարբառախմբին անցել է գրաբարի միջոցով:

Ակկադական փոխառություններ՝ կըղզի, կըմախք, սանդ, հալավ, պատ, քըշտել, մզել-մը/իրզել, ցից-ցեց, կիր-կըեր, տարի ծիր-ծեր:

Արամերենից եւ ասորերենից՝ տըղա, քօշ «արու այծ», մանգեղնը, տիրել, առնետ-ըռնատ, ցեց, մաշկը, շամփուր, խըմօր, ձեթ-ձեթ, կացին, քուրա, հաշիվ/աշել, խանութ, դար, շափաթ, օ/օ՞րփ/աա՞թ, փիլիսօփա, բերդ-պերթ, արսօր, քարօզ, ծօմ, սըտանա || սադանա:

Մ. Քումունցը բարբառախմբին անցած իրանական փոխառությունների ցանկը ընդհանուր առմամբ հնարավորինս ճշգրտել է՝ հետեւելով այդ բնագավառում կատարված աշխատանքներին: Էջ 342-352-ի՝ հատկապես տողատակերում, այլ հեղինակների (Ա. Բակունցի, Լ. Հովհաննիսյանի եւ այլոց) եւ իր կողմից մշակված հարյուրավոր իրանական փոխառություններ են գրանցված: Բակունցի օրինակներից՝ գմբեթ- քյումբաթ, Հումբաթի ձորը, պարց, նօթ, ամբար, մօմ, մաճ, պահ, պըրինձ, ժանգ/զյ, տիժար, կար (անել), ճընապահ, ավիրել, տիրտակել || տա՞րտա՞կ, քըսակ, գանձ-կյա՞նձ, կըտակ, կոյս-կուս «անկյուն»:

Այստեղ Քումունցի օրինակները զբաղեցնում են 18 տող, մի քանիսը՝ կօնդը զըռ || զըռ «մեծագլուխ», նուազ-նըվազ || նըվաժ, կոյտ-կ/կյու՞տ, զուր-իզուր || զուր || ուզուր, հազար, ժամ, պառավ, ուշ-ու/օշ, պաղրաստ, սպիտակ-սիպտակ, սեաւ-սել || սըել, կապոյտ,-կ/կյա՞պիտ/ու՞տ, հըզօր, կարմիր-կ/կյա՞րմու՞ր, երաշտ-արաշտ, պատիւ-պաղել, ահ, վախ (վըխկըլօտ), վատ-վադ, դիւան-դիվան, վարդապետ-վըրթաբեդ, բադասխան, աշագերդ, շեն, թըշնամի/ե, մօրէխ, օշափօ/էթու/ու՞ն, հրեշ-հըրեշ || հիլիշտրակ, շինիլ:

Բորենի իմաստով՝ քյա՞վթա՞ռքօսի, ճախարակ-ճ/չըխարակ, աշխատել-ըշխադել, երախ-ռէխ || ըռե/ըէխ, արշա>արշալույս-արշա կյալ «լույս աշխարհ գալ», խըրեզ/զյ «քիչ», պարսկ. xorde>խուրդա «մանր», գ/զյարդան «վիզ»:

Կովկասյան լեզուներից՝ քարթվելական խմբից անցած բարբառախմբի փոխառություններ են՝ բոզ-բօզ «անառակ», ճըպօռ, ծանդըր, զըզվել, վէխճար || վըէխչա՞ր, խոփ-խուփ, գօջի, ճկոյթ-կըծէյնը || ծուծէյնը || ծուծլուկ || ծիկլի, գրոյց-գուրուց:

Արեւելակովկասյան՝ դադստանյան լեզուներից՝ քաժ-քաժ, խոտ, կախ (ինգլի):

Հունական փոխառություններից՝ փօս, ադամանդ, ստամոքս, մէտաքս, բաղնիս, պալատ, կամար, տօկօս, լիտր, գիրագի, միրուք, քարտ, տիպ, պօնիկ, քրիստօնյա, մատուռ-մատուռնր, եկեղեցի-եղցի:

Ամփոփում

Ատենախոսության Սեղմագրի եւ Եզրակացությունների բովանդակությունը՝ բնութագրումներն ու վերլուծությունները, լիարժեք կարգով համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը՝ բխելով նրա բուն էությունից:

Սյունիքի եւ Արցախի բարբառների ու խոսվածքների միջեւ կան եւ՝ ընդհանրություններ, եւ՝ մասնակի տարբերություններ, որոնք բառերի բնութագրման ընթացքում նշվում են կամ որպէս առանձին բառեր, կամ՝ զուգաձեւեր:

Նկատելի եղան որոշ բառաձեւերում, օրինակ՝ արէվ, չկա՝ ա՝րէվ, լուսին, չկա՝ լու՝սնա՝նգյա՝, մրջյուն-մըրջեմնը, չկա՝ բու՝չու՝մնը, հայր-հէր || հար, չկա՝ հա՝ր, հազ, չկա՝ հա՝զ, քրտինք-քըրտօնք, չկա՝ քըռնօնք եւ այլն:

Ձեւախմաստային ճիշտ գործածական բառը Սեղմագրում 2 անգամ գործածվել է, իսկ 2 անգամ էլ՝ ձեւախմաստային (ոչ ընդունելի) (էջ 4) եւ աշխատանքում՝ 11 անգամ (էջ 31, 45, 55, 71, 77, 99, 142, 148, 185, 194, 287, 342, 350):

Մի քանի վրիպակ՝ կյօ՞ղլու>կյօ՞ղու կէնալ (332), որդներ (86) > որդեր, ունել ունել (345, տողատակում), կրկնություններ՝ էջ 154-ում, 165-ում, ճմարիտ (342՝ տողատակ) > ճշմարիտ, Սեղմագրում՝ բազմաթիվ (էջ 4):

Այս վերջին գրառումներն ինչ-որ ազդեցություն չունեն աշխատանքի որակի վրա:

Սույն ատենախոսությունը անթերի գիտական հետազոտություն է, որի հեղինակը, բազմալեզու մասնագիտական գրականության, աղբյուրների իմացությամբ եւ մայրենի լեզվին խորապես տիրապետելով՝ իրականացրել է Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի պատմական շերտերի համապարփակ եւ համակարգային վերլուծություն 23 թեմատիկ խմբերում:

Մհեր Քումունցն այնքան բարդ ու պատկառելի վերլուծությունները՝ բառաքնություններն ու ստուգաբանությունները, իրացնում է վստահորեն՝ կատարելով վկայություններ ու համեմատություններ, մերժում կամ ճշմարիտ, օրինական համարում: Նրա բոլոր տեսակի լուծումներն ինքնավստահի օրինակ են. ամեն ինչ ճշմարիտ է, ամեն բան ընդունելին է, ծայրից ծայր՝ գիտական ու փառաբանության արժանի:

Ուստի մասնագիտական խորհրդի անդամների առջեւ հայտնում եմ իմ դրական կարծիքը Մհեր Քումունցի դոկտորական ատենախոսության վերաբերյալ եւ երաշխավորում եմ նրան տալ իր հայցած դոկտորի գիտական աստիճանը, որին նա լիարժեք իմաստով արժանի է:

Ա.Ղարիբջանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, Բ.գ.դ., Էդուարդ Սամսոնի Մկրտչյան
11.11.2025



Հաստատում եմ Բ.գ.դ., պրոֆեսոր Էդուարդ Մկրտչյանի
ստորագրությունը:

Խ.Արովյանի անվան ՀԱՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր,
գիտքարտուղար, մ.գ.թ. դոցենտ Մ.Բսպիրյան
18.11.2025

